

խորդքն մէկզմէկ կը կոխեն . կը պատահի որ ոմանց ծանր ու հնացեալ ցաւոց ալ առողջութիւն կու տան : Բայ պատճառով աւելի գարնան եղանակին թէ առողջք և թէ հիւանդք իբր ուխտաւոր խումն բազմութեամբ այս ջերմուկներու համար Եւրօպայ, Երթնի գեղերը, և այլ տեղեր կ'ընթանան ընտանեօք հանդերձ, շատերն ալ զբօսանքի և զուարճութեան համար :

Վուցէ այս մետաղներու յորդութիւնն գոլորշիքները թանձր ծուխի նման գետնին երակներուն մէջ կուտակէ, որոնք ապա ելնելու և տարածելու տեղ չգտնելով, բնածին ուժով կ'ուռին ու կը սաստկանան՝ այնպիսի ուժ գին եռացմամբ, մինչև երկրին երեսը ցնցելով կը սասանեցնեն, այնպէս որ կարծես թէ թանձրահող դաշտեր ու երկնածայր լեռները ցորենի պէս կը մաղեն, երբեմն մէկ տեղէ միւս տեղը կը նետեն փոքր խիճերու նման մեծ կակ բլուրներ, գետինը անյատակ խորութեամբ կը ճեղքեն և շահաստան քաղաքներ 'ի խոր անդունդ կը սուզանեն . և բարձր լեռներու գագաթները մօտակայ գեղերու վրայ չընկնելով, կը թաղեն զանոնք իրենց փլատակաց ներքե :

Կը շարունակուի :

ՍԵՐՈՎԻԷ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՃԵԱՆ

Պարսկաւոտան :

(Տես երես 116)

Պարսից հիմակուան լեզուն քաղցր և պարզ է, և շատ խառնուրդ ունի հընդկաց սանաքրիդ լեզուէն, որուն և մէկ ճիւղը կը սեպուի : Սասանեանց ժամանակը ունէին ուրիշ լեզու մըն ալ որ Տերի կ'ըսուէր, ասիկայ հիմա բոլորովին խափանուած է . իսկ կէս-ուր ըսուած Պարսիկները, որ բուն նախնի կրակապաշտ Պարսիցմէ առաջ կուգան, ինչուան հիմա զանգիւղի և պահլաւի ըսուած

հին լեզուները պահած են, իրենց օրինաց գիրքը այն լեզուներով գրուած ըլլալուն :

Վիտութեանց մէջ շատ ետ մնացած են Պարսիկք, և մինչև հիմա քիչ կան մէջերնին հասարակաց ուսումնարաններ և վարժատուններ . իսկ հարուստները տներնուն մէջ սորվեցնել կուտան իրենց տղոցը : Բայ պատճառաւ որ ինչ և իցէ գիտութեանց մէջ երևելի անձ մը չենք գտներ իրենց պատմութեան մէջ բաց 'ի բանաստեղծութիւն, որուն մէջ արևելեան առաջին ազգերէն մէկն է : Վիտաւոր բանաստեղծներն են Ռուտիկէ, Պելամի Ֆէլէքի, Էնվերի, Ֆերտուսի՝ որ Պարսից հոմերն կը սեպուի իր Հոմէրոսէ քերթուածովը, որուն գաղղիերէն արձակ թարգմանութիւնն և ճոխ տպագրութիւնն եղած է, ինչպէս նաև անգղիերէն ալ : Ֆերտուսի խոտին ժ. դարու մէջ, որ քառասուն հազար տող ոտանաւոր գրած է, որոնք մասամբ թարգմանուած են գաղղիերէն : Սասանի բարոյախօս բանաստեղծը, որ շատ գրուածքներ ունի, ինչպէս են Կիւլիստան, Պոստան, Մուսան և ուրիշ բարոյախօսութիւններ, ասոնք թարգմանուած են լատիներէն, անգղիերէն և գաղղիերէն և տպագրուած : Հաֆիզ, ժ. դարու մէջ, որուն բոլոր երկասիրութիւնքը ժողովուած է Տիւան անունով գրքի մը մէջ և լատիներէն, անգղիերէն և գաղղիերէն թարգմանուած և տպուած են : Բայ բանաստեղծից շատ երգերը և առակները մինչև հիմա Պարսից ժողովրդեան բերանն են : Եսոնց մէջ զատ ունին ուրիշ բազմութիւն մըն ալ երկրորդական բանաստեղծներու՝ ուսկից կը տեսնուի որ Պարսիկք մեծ յարգ կուտան եղեր բանաստեղծութեան և մինչև թագաւորք ալ իրենց ամենայն զբաղանաց միջոց կը պարապին եղեր ասոր, ինչպէս Ֆէթհ-Էլի Ը ահ որուն ոտանաւորներն գաղղիերէն ալ թարգմանուած են, իսկ ձեռագիրը կայսերական գրատան մէջ կը գտնուի : Բանաստեղծութենէ զատ կը գրտնուին մէջերնին նաև պատմագիրք :



Այր Պարսիկ:

Իսկ տիեզերագիտութեան սկզբունքներն ալ այնչափ միայն կը սորվին, որ կարենան դիւրաւ աստեղագիտութեան պարապիլ, որուն Շահէն սկսեալ մինչև յետին աղքատը կուրօրէն հաւատք մը կ'ընծայեն, որ արդէն իրենց հին կրօնից մէկ մասը կը կազմէր:

Իսթիլութիւնը շատ խեղճ վիճակի մէջ է Պարսկաստան և բժիշկները մինչև

չև արեան շրջանին օրէնքը չեն գիտեր, ասկէ կրնայ գուշակուիլ վիրաբուժութեան և անդամազննութեան ալ ինչ վիճակի մէջ ըլլալ: Տէւէիները, Էմաները և Մուլաները ազատ են ամենայն կերպով բժշկութեան փորձեր ընելու հիւանդներու վրայ առանց դոյզն անգամ ծանօթութիւն ունենալու անոր տեսակին: Նշաղի հիւանդութեան



Կիև Պարսիկ :

պատուաստը թէպէտ ծանօթ է Պարսից, բայց կիրառութիւնն շատ քիչ ըլլալուն շատ ջարդ կ'ըլլայ մէջերնին :

Պարսիկք բնութեամբ ընկերասէր են, սեղաննին ճոխ է, կերակուրնին սնունդարար և առատ, մասնաւորապէս ընդէղէնք, պտղեղէնք և չաքարեղէնք : Ի կրօնից արգելեալ է Պարսից արջառոց

քանի մը տեսակները, և մասնաւորապէս խոզի միս ուտելը : Վինին թէպէտ և զուրանը կ'արգելէ, բայց շատերը առատութեամբ կը խմեն : Խաչֆէի սովորութիւնը ընդհանուր է Պարսկաստանի մէջ և օրը քանի մը անգամ, նոյնպէս նաև ծուխ քաշել, մանաւանդ Նաբիէլէ, որուն Դէմոէի կը գործածեն,



Համառան և Էրզնկա շրիւնք :

որ է Թարմ ծխախոտ , որ Պարսկաստանի մէջ առատ կը բուսնի :

Պարսից զգեստը ճոխ է և զարդարուն , արք կը հագնին լախ վարտիք մը և երկայն բաճկոն մը (Էնթարի) որ մինչև ոտքերնին կ'իջնայ , ասիկայ կամ մետաքսէ կ'ըլլայ կամ դիպակէ կամ բամբակէ և երբեմն ալ շալի , մարդուն ունեցած աստիճանին համեմատ . մէջ

քերնին շալէ գօտի մը ունին , այս շալին աղնուութիւնը ցոյց մըն է միանգամայն զայն կրողին ճոխութեանը . ասոնց վրայէն ունին լախ վերարկու մը , մեծամեծացը մինչև ոտուրնին կը հասնի , իսկ հասարակ ժողովրդեան մինչև ծնկուրնին : Պարսից սովորութիւն է որ գլխու մազերնին բոլորովին կը գերծեն միայն դազաթնեքուն վրայ փունջ

մը մազ թողլով, նոյնպէս ակաջներնուն ետին. այս մազի փունջերը երիտասարդաց մինչև ուսը կը հասնի: Գլուխնին կը գնեն փակեղն, գրեթէ ութ և տասն բթաչափ երկայնութեամբ, ոլխարի կամ գառան բրդէ. թագաւորն և մեծամեծները ասոր վրայ ճիւղ չալ մըն ալ կը պատեն: Ստուրնին հողաթափ է տներու մէջ և ճամբաները քալելու ատեննին, բայց ձի հեծնելու համար երկայն կօշիկներ ունին, որ մինչև ծնկուրնին կը հասնի, իսկ ձմեռները կը գործածեն նաև մուշտակ (սիւր):

Երկուսն ալ գրեթէ արանց պէս է, միայն լայն շապիկ մը ունին նսեմագոյն, նոյն գունով լայն տափատ մը և մէկ երկայն քօղ մը. ազնուական տիկնանց շապիկը բեհեզէ կամ մետաքսէ կ'ըլլայ, նոյնպէս տափատնին ալ ամառը բեհեզէ, իսկ ձմեռը թաւիշէ. գլխարկնին միակերպ չէ, տան մէջ թեթև ապարօշ մըն է, երբեմն գլխարկ հայկական, և շատ անգամ ալ մազերնին կ'ողորեն կը հիւսեն և ցցունք մը ըրած քօղ մը կը ձգեն վրայէն. վիզերնին աղեղնաձև ոսկի շղթայ մը կը կախեն վրան ոսկիներ արծաթներ, և անգին քարերով զարդարուած: Իսկ կանանց քալելու ելած ատեն ծածկուելու ունեցած սովորութիւննին ահաւասիկ վերը դըրուած պատկերին մէջ որոշ կը տեսնուի:

Պարսկաստանի մայրաքաղաքն է Ղէհրան, լերան մը ստորոտը գեղեցիկ գիրքով, չորս կողմը ամուր պարիսպ և լայն ու խոր խրամ ունի. օդուն գէշութեան պատճառաւ բնակիչքը ամառները մերձակայ լեռներուն վրայ կը քառուին, որով գրեթէ կ'անմարդանայ քաղաքը, և հոն հանգիստ կեանք կ'անընեն որսորդութեան պարպելով: Բաղքին մէջ երեւելի շէնքերն են ահին պալատը, 150 բաղանիք, կապերտի և երկաթեղինաց գործարանները: Ղէհրանի մէջ կան նաև մօտ 150 հայազգիք:

Իսպահան Զեհեբուդ գետակին մօտ Պարսկաստանի հռչակաւոր քա-

ղաքներէն մէկն է, որ և ատենօք մայրաքաղաք եղած է. այն միջոցին ունեցեր է 700,000 բնակիչ և 137 մեծ և փառաւոր պալատներ, բայց հիմա անոնց շատին հազիւ թէ աւերակները մնացած են. նշանաւոր է թագաւորական մզկիթը՝ զոր Շահաբաս շինել տուած է. Զարադրուած ճեմէլքն՝ որ 3,200 ոտնաչափ երկայնութիւն ունի, երկու կողմը սօսի ծառերով՝ հրապարակ (Մէյդան) մըն ալ ունի՝ որ աշխարհքիս ընդարձակագոյն հրապարակներէն մէկն է. երեւելի են նաև շուկաները, կամուրջները, նմանապէս մետաքսի, բամբակի, զինուց, չուխայի, շաքարի գործարանները: Իսպահանի մէջ հայոց առանձին թաղ մըն ալ կայ որ Սոր Սուղա կ'ըսուի, ուր երբեմն երեւելի հայ վաճառականներ կային. բայց հիմա առջինին պէս ծաղկած չէ, շատերը ցրուած ըլլալուն պատճառաւ:

Համատան, որ հին ատեն Եկբատան կը կոչուէր, Ելվէնտ լերանց քով, և Սարաց թագաւորութեան մայրաքաղաքն եղած է. հիմա հնոյն հազիւ թէ վեցերորդ մասը կայ, իսկ մնացածը աւեր և աւերակ է բերդերովը և պարիսպներովը: Երանաւոր աւերակներէն մէկն է Պարսից թագաւորաց ամարանոցը. այս քաղաքին մէջ մինչև հիմա կը ցուցնեն Եսթերայ և Սուրդէի գերեզմանները: Հոս ալ հայոց ազգէս կը գտնուին 500 ի չափ անձինք:

Շիրազ, զուարճալի հովտի մը մէջ բերդաքաղաք է, մասամբ մը աւրուած էր 1824^{ին} եղած գետնաշարժէն, իսկ 1853^{ին} աւելի ևս սաստիկ սասանութեամբ մը բոլորովին հիմնայատակ եղաւ: Բայ քաղքիս մօտ նշանաւոր են Սատի և Հաֆըզ քերթողներուն գերեզմանները:

